ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1139-Ա « 30 » սեպտեմբերի 2025թ.

«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/45» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից ներկայացված Նուբարաշենի խճուղու հարևանությամբ անտառաշերտի ստեղծման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների գնման հայտը.

1.Ձևավորել «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/45» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Գ. Ավետիսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Է. Արամյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
Հ.Հարությունյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
Գ. Թամրազյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության առաջատար մասնագետ
Վ. Հակոբյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության առաջատար մասնագետ

2. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ծառայությունների գնումների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Հովհաննիսյանին:

3. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունն ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ. 1, հ. 126 սենյակ):

4.Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6.Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ